Հարգելի տնօրեն

2014թ-ի բյուջեով նախատեսված գումարով ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակի թիվ 1 հատուկ դպրոց ՊՈԱԿ-ին անհրաժեշտ սննդի ձեռք բերման նպատակով կազմակերպվող ՇՀ մրցույթի համար խնդրում եմ ներկայացնել Ձեր կազմակերպության կողմից մատակարարվող սննդամթերքի առաջարկվող գինը:

Կից ներկայացվում ենք անհրաժեշտ սննդամթերքի տեխնիկական բնութագիրը, վճարման և գնման ժամանակացույցերը, ՇՀ պայմանգրի օրինակը: Մրցույթը տեղի կունենա 2014թ-ի 18-ին ժամը 13:00 Աշտարակի թիվ 1 հատուկ դպրոցի շենքում / հասցեն ք.Աշտարակ Տիգրան Մեծի 25/:

Աշտարակի թիվ 1 հատուկ դպրոց ՊՈԱԿ Գ.Աղաբաբյան

Հավելված N 3
,,____,,_____2014թ.
կնքված պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Ապրանքի անվանումը	Ֆինանսավորման ժամկետը			
Սննդամթերք	Ֆինանսավորումը կատարվելու է 2014թվականի պահպանման ծախսերի նախահաշվով նախատեսված գումարների սահմաններում 100 %, երկկողմ հանձնման – ընդունման արձանագրության հիման վրա (դրամ)			
	1-ին եռամսյակ	2-րդ եռամսյակ	3-րդ եռամսյակ	4-րդ եռամսյակ
	100%	100 %	100 %	100 %

<<ՊԱՏՎԻՐԱՏՈՒ>>
_____
(ստորագրությունը)
Կ.Տ

<<ՎԱՃԱՌՈՂ>>
_____
(ստորագրությունը)
Կ.Տ

0

Հավելված N1
<<___>>_____2014թ
կնքված պայմանագրի
ԱԹՀԴ ՇՀԱՊՁԲ- 11/2

1.Գնման առարկա է հանդիսանում 2014 թվականի ընթացքում Աշտարակի թիվ 1 հատուկ դպրոց կարիքների համար սննդամթերքի ձեռքբերումը:
2.Մատակարարումը պետք է իրականացվի համաձայն հետևյալ բնութագրերի.

Հ/հ	CPV ծածկագիր	Ապրանքի անվանումը	Չափի միավորը	քանակ	գումար	Տեխնիկական բնութագիրը
1	15511700	Կաթի փոշի	կգ	178	462,800	Պաստերացված կովի կաթ 3 % յուղայնությամբ, թթվայնությունը՝ 16-210Т, ԳՕՍ 13277-79: Անվտանգությունը և մակնշումը՝ N 2-III-4,9-01-2003 (ՌԴ Սան Պին 2,3,2-1078-01) սանիտարահամաճարակային կանոնների և նորմերի և 'Սննդամթերքի անվտանգության մասին' ՀՀ օրենքի 9-րդ հոդվա
2	15512000	**թթվասեր, տեղական**	կգ	100	101,100	Թարմ կովի կաթից, յուղայնությունը՝ 20 %-ից ոչ պակաս, թթվայնությունը՝ 65-100 ՕТ, անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1925-Ն որոշմամբ հաստատված «Կաթին, կաթնամթերքին և դրանց արտադրությանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: Պիտանելիության մնացորդային ժամկետը ոչ պակաս քան 90 %
3	15542100	**կաթնաշոռ դասական**	կգ	100	2,050	Կաթնաշոռ 18 և 9,0% յուղի պարունակությամբ, թթվայնությունը՝ 210-240 ՕТ, փաթեթավորված սպառողական տարաներով, անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1925-Ն որոշմամբ հաստատված «Կաթին, կաթնամթերքին և դրանց արտադրությանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի» և «Սննդամթերքի
4		սպիտակաձավար	կգ	40	16,000	սպիտակաձավար առանց խառնուրդների

<<ՊԱՏՎԻՐԱՏՈՒ>>

(ստորագրությունը)
Կ.Տ

<<ՎԱՃԱՌՈՂ>>

(ստորագրությունը)
Կ.Տ.

Նախագիծ

ՄՆՆԴԱՄԹԵՐՔԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

____,_____, 2014

<< Աշտարակի թիվ 1 հատուկ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ի դեմս տնօրեն, Գայանե Աղաբաբյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ «Պատվիրատու», մի կողմից,
, այսուհետև՝ «Վաճառող», մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան և գործողության ժամկետը

1.1 Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետև՝ Պայմանագիր), սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում Պատվիրատուին մատակարարել ըստ հավելված 2 Գնման ժամանակացույցի, սույն պայմանագրի հավելված 1 Տեխնիկական բնութագրով նախատեսված տեսակի հացի (այսուհետև՝ Ապրանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար ըստ հավելված 3 վճարման ժամանակացույցի:

2. Մատակարարման պայմանները

2.1 Վաճառողն Ապրանքը մատակարարում է Պայմանագրով նշված ծավալներով և ժամկետներում:

2.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում՝ Վաճառողը Ապրանքը հասցնում է Պատվիրատուին.

3. Կողմերի իրավունքները և պարտականությունները

3.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ապրանքը Պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել Ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի.

3.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ սույն պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք.

ա) Պահանջել հատուցելու Ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) Չընդունել Ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ապրանքը սույն պայմանագրին համապատասխանող որակի Ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու սույն պայմանագրի 7.4 կետով նախատեսված տուգանքը.

գ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ապրանքի համար վճարված գումարը.

3.1.3 Եթե հանձնվել է Պայմանագրով որոշվածից պակաս քանակի Ապրանք, ապա.

ա) պահանջել լրացնելու Ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված Ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե Ապրանքի համար վճարվել է, ապա՝ պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու սույն պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը :

3.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ Ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող Ապրանքը և հրաժարվել մնացած Ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր Ապրանքներից և պահանջել վճարելու սույն պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող Ապրանքների անհատույց փոխարինում սույն պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան Ապրանքներով.

3.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել Ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու սույն պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

3.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Պատվիրատուն Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է Ապրանք՝ սույն պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև

տարբերության չափով, ինչպես նաև Ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը.

3.1.7 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է սույն պայամագիրը.

3.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի Ապրանք որը չի կարող փոխարինվել Պատվիրատուի համար ընդունելի ժամկետում.

բ) Ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի:

3.1.8 Զննել Ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին.

3.2 Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Կատարել սույն պայմանագրին համապատասխան մատակարարված Ապրանքների ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

3.2.2 Վաճառողի հանձնած Ապրանքից սույն պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ Ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին.

3.2.3 Սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 7.5 կետով նախատեսված տույժը:

3.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին սույն պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով Ապրանքի բնույթից և նշանակությունից:

3.2.5 Վաճառողին տրամադրել 9.1 կետում նշված եզրակացության պատճենը:

3.2.6 Սույն պայմանագրի 3.3.4 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս վնասները:

3.3 Վաճառողն իրավունք ունի՝

3.3.1 Պատվիրատուից պահանջել ընդունելու սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքը.

3.3.2 Պատվիրատուից պահանջել հատուցելու վնասները, եթե Վաճառողը Պատվիրատուի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո՝ ողջամիտ ժամկետում, այլ անձի՝ Պայմանագրով նախատեսվածից ավելի ցածր, սակայն ողջամիտ գնով վաճառել է Ապրանք՝ համապատասխան Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով:

3.3.3 Պատվիրատուից պահանջել վճարելու համապատասխան Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները.

3.3.4 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Պատվիրատուն էականորեն խախտել է սույն պայամագիրը:

3.3.4.1 Պատվիրատուի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են Ապրանքի համար վճարելու ժամկետները:

3.3.6 Պատվիրատուի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել Ապրանքը:

3.4 Վաճառողը պարտավոր է՝

3.4.1 Պատվիրատուին հանձնել Ապրանքը՝ սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում:

3.4.2 Սույն պայմանագրի 2.2 կետին համապատասխան՝ Ապրանքը Պատվիրատուին մատակարարել վերջինիս հետ նախապես համաձայնեցված ժամկետներում:

3.4.3 Ապահովել Ապրանքի մատակարարումը սույն պայմանագրի 3.1.2 բ) և 3.1.5 կետերին համապատասխան՝ Պատվիրատուի կողմից սահմանված ժամկետներում:

3.4.5 Պատվիրատուին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Ապրանք:

3.4.6 Պատվիրատուին հանձնել սույն պայմանագրի N 1 հավելվածով նախատեսված որակի և քանակի Ապրանք՝ Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իսկ Պատվիրատուի պահանջով տրամադրել Ապրանքի որակը հավաստող՝ << օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

3.4.7 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, սույն պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

3.4.8 Հետ տանել Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 3.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված Ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել Ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Մատարարարին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

3.4.9 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

3.4.10 Պատվիրատուին հանձնել Ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

3.4.11 Սույն Պայմանագրի 3.1.7 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Պատվիրատուին հատուցել վերջինիս վնասները

4. Ապրանքի գինը և վճարման կարգը

4.1 Սույն պայմանագրով Վաճառողի հանձնած Ապրանքի ընդհանուր գինը կազմում է՝ **682400** վեց հարյուր ութսուներկու հազար չորս հարյուր/ << դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Յուրաքանչյուր միավորի գինը սահմանված է սույն պայմանագրի հավելված 1-ով: Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և << օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, ինչպես նաև Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

Սույն պայմանագիրը կնքելու պահից մինչև սույն պայմանագրի հավելված 2-ի նախատեսված Ապրանքի հանձնումը շուկայական գների զգալի տատանման դեպքում կողմերից մեկի նախաձեռնությամբ տեղի է ունենում գների վերահաշվարկ, ինչի արդյունքում սահմանված գները պետք է 5 տոկոսով նվազ լինեն որոշված նվազագույն շուկայական գնից: Պատվիրատուի կողմից հաշվարկվում է Ապրանքի միավորի գինը, որ հավասար է սննդամթերքի նվազագույն շուկայական գնին: Սննդամթերքի նվազագույն շուկայական գինը հաշվարկվում է՝ Հայաստանում տվյալ ոլորտում գործող առնվազն երեք տնտեսավարող սուբյեկտների այդ օրվա դրությամբ առաջարկվող գների հիման վրա: Պատվիրատուն գների հարցումը կատարում է գրավոր և վերոգրյալ սուբյեկտների գրավոր պատասխանի հիման վրա հաշվարկում Ապրանքի գինը: Գինը ներառում է Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

Գնի ցանկացած փոփոխություն իրականացվում է միայն կողմերի համաձայնությամբ:

4.2 Պատվիրատուն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարում է << դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների վերջնական փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա:

5. Ապրանքի որակը

Վաճառողը երաշխավորում է մատակարարված Ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

6. Ապրանքի հանձնումը և ընդունումը

6.1 Վաճառողն Ապրանքը հանձնում է Պատվիրատուին՝ սույն Պայմանագրի հավելված 2-ում նշված ծավալներով և ժամկետներում:

61.1 Վաճառողը՝ Ապրանքի վերջնական հանձման ավարտից 2 աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին է ներկայացնում ամբողջությամբ հանձնած Ապրանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ (հավելված 5):

6.2 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից հինգօրյա ժամկետում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

6.3 Ապրանքը Պատվիրատուի կողմից վերջնական ընդունված է համարվում երկկողմանի հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրելու պահից:

7. Կողմերի պատասխանատվությունը

7.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած Ապրանքի որակի և Պայմանագրով նախատեսված՝ մատակարարման ժամկետների պահպանման համար:

7.2 Վաճառողի կողմից սույն պայմանագրով նախատեսված ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված Ապրանքի գնի 0,05%-ի չափով:

7.3 Սույն պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողի կողմից մատակարարված Ապրանքի համար վճարման ենթակա գումարներից:

7.4 Սույն պայմանագրի 1.1 կետում նշված Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի ընդհանուր գնի 0,05%-ի չափով:

7.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05%-ի չափով:

7.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.7 Տույժերի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. Այլ պայմաններ

9.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում 2014 հունվարի 1-ից պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցների նախատեսման դեպքում և գործում է մինչև 2014 թվականի դեկտեմբերի 31-ը:

9.2 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր պայմանագիր (համաձայնագիր) կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

9.3 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

9.4 Սույն պայմանագիրը կազմված է 4 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի 1-5 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

9.5 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող *փոխանց*վել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

9.6 Սույն պայմանգրի կատարման ապահովումը վերադարձվում է Վաճառողին պայմանագրի կատարման ավարտից 20 օր հետո:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ՎԱՃԱՌՈՂ
<< Աշտարակի թիվ 1 հատուկ դպրոց >>ՊՈԱԿ Ք.Աշտարակ Տիգրան Մեծի 25 ՀՎՀՀ 05006887 Հայէկոնոմբանկի Աշտարակի մ/ճ հ/հ 163208160172 տնօրեն՝ Գ.Աղաբաբյան	